

Լևոն Օսիկի Ալոյանի՝ «Պատմության թեման արևմտահայ ողմանտիկական արձակում»
թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Վերջին ժամանակներում, ցավոք, հազվադեպ են մանավանդ սփյուռքահայ հայ-
ցորդների՝ «Գրականագիտություն» մասնագիտությամբ գիտական աստիճանի հայցման
ատենախոսությունները, և այս իրավիճակում հաճելի բացառություն է Լևոն Օսիկի
Ալոյանի՝ նույն ինքը հոգևոր ձեռնադրությամբ հոգեշնորհի հայր Ներսես վարդապետի՝
հրապարակային պաշտպանության ներկայացարած սույն աշխատությունը:

Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբան, Հայոց պատրիարքարանի՝ ար-
դեն 170 տարի կանոնավոր պարբերականությամբ հրատարակվող «Սիոն» կրոնական,
գրական, պատմաքանասիրական ամսագրի ներկայիս գլխավոր խմբագիրը, որը ԵՊՀ
հայ բանասիրության ֆակուլտետի սան է նաև, իր մտացիությամբ, մասնագիտական կա-
րողություններով էականորեն տարբեր է վարդապետներից շատերից, որոնց անձամբ
ճանաչել ենք շուրջ երեք տասնամյակ առաջ տեղի Ժառանգավորաց վարժարանում և
Ընծայարանում Հայ գրականություն և Նոր Կտակարան դասավանդելու ընթացքում: Ո՛չ
հակադրելու, այլ համեմատության համար հիշենք այս ատենախոսության թեմային
առնչվող մի միջադեպ. ինքնասիրահարված վարդապետներից մեկը մի օր դիմելով մեզ՝
վճռաբար հայտարարեց. «Պարո՛ն, երկուքեն մեկը հաստա՛տ ստախոս է. նույն դեպքի
կամ անձնի մասին Բուզանդն ասանկ կըսե, Բաֆֆին՝ անանկ: Որպես ԵՊՀ-են եկած
հրավիրյալ գիտնական ու դասախոս՝ ըսեք ինձի՝ անոնցմե ո՛րն է ստախոսը»:

Հարկադրված եղանք նրան բացատրել, որ ոչ մեկն էլ ստախոս չէ. երկար-բարակ
ապարդյուն պարզաբանեցինք պատմավեպի տեսության հիմնահարցերը, պատմութ-
յան գեղարվեստականացման անհրաժեշտությունը, սկզբնաղբյուրի և նրա հիմքով ստեղծ-
ված գեղարվեստականացված իրականության, պատմականության և արդիականութ-
յան համապատասխանության խնդիրը, գրողի՝ պատմությանը չստրկանալու, հանուն
գեղարվեստական համոզչության ու գեղագիտական նպատակադրումների պատմական
փաստերից շեղումների և փաստերը ըստ վիպական կառույցի և գործողությունների

տրամաբանության ներկայացնելու անհրաժեշտությունը, ստեղծագործական երևակայությամբ պատմական իրականությունը հարստացնելու կամ վերակերտելու, պատմական անձնավորության և նրա հիմքով ստեղծված գրական կերպարի ընդհանրություններն ու տարբերությունները, նոր սերունդներին պատմության օրինակով դաստիարակելու՝ գրողի գաղափարագեղագիտական նպատակադրումները և այլն, և այլն:

Սույն աշխատության հեղինակը, սակայն, տարիքի և այլ հանգամանքների բերումով Սուրբ քաղաքում մեր աշխատելու տարիներին, ցավոք, ներկա չէր, որ դիմեինք նրա օգնությանը: Իսկ միջադեպն այժմ հիշեցինք՝ պարզապես հիմնավորելու համար այն իրողությունը, որ այժմ նույն Սրբոց Հակոբյանց միաբանության՝ խոստումնալից ապագայով մի երիտասարդ հոգևորական մեր դատին է ներկայացրել վերը հիշված բոլոր հիմնախնդիրները արդի բանասիրական գիտության նվաճումների դիրքերից արծարծող, հայ նոր գրականության պատմության լուսաբանման առումով հույժ կարևորությամբ, մասնագիտական լուրջ արժանիքներով օժտված, հարուստ ու բովանդակալից գիտական աշխատանք: Նրա աներկրա հաջողվածությունը, անշուշտ, հեղինակի համառ աշխատասիրության, համալսարանական գիտական դպրոցի և մթնոլորտի արդյունքն է, որի վրա նկատելի է նաև ուղղորդող գիտական ղեկավարի՝ պրոֆ. Ալ. Մակարյանի՝ Պատմահոր ասած՝ «խնամքի զգեստը»:

Սովոր ենք եղել ծայրը ծայրին մի կերպ հասցրած, եզրակացություններով և օգտագործված գրականության ցանկով հանդերձ պահանջվող 120 էջը մի կերպ լրացրած թեկնածուականների: Թույլատրելի առավելագույն ծավալով ա՛յն աշխատանքը, սակայն, 172 էջ է, և սա զուտ քանակական ցուցանիշ կամ առավելություն չէ, այլ պայմանավորված է թեմայով, քննարկվող բազմազան հարցերի լայն ընդգրկումով և հեղինակային առատ ասելիքով, որ նորություն է բանասիրական գիտության մեջ:

Նկատենք, որ մեր գրականագիտական միտքը առաջներում այնքան էլ բարեհաճ չի գտնվել հայ պատմավիպասանության իրական հիմնադրի՝ Հովսեփ Շիշմանյան - Ծերենցի հանդեպ: Նրա երկերի առիթից առիթ հատուկենտ հրատարակությունները՝ թեկուզ և ուղեկցող առաջաբաններով, հայ նոր գրականության պատմության ակադեմիական հրատարակության երրորդ հատորում նրա գրական դիմանկարը, տարբեր գրականագետների՝ հատուկենտ բնութագրական արտահայտությունները չեն վերածվել համակարգված ամբողջական գիտական խոսքի, և լուրջ հեղինակը գրեթե մոռացության

է մատնվել հանիրավի: Նրա մասին վերջին գրականագիտական գիրքը՝ Ռ. Նանում-յանի 116 էջանոց մենագրությունը, լույս է տեսել 65 տարի առաջ՝ 1961 թ.:

Ըստ երևույթին՝ Խորեն Նար-Պեյին, Սրբուհի Տյուսաբին, Ծերենցին արժևորելիս նախապաշարված ուսումնասիրողներից ոմանց կաշկանդել կամ ավելորդ զգուշավորության են մղել նաև Հ. Պարոնյանի դիպուկ երգիծական բնորոշումները, որոնք ամենսին էլ նրանց վաստակը ոչնչացնելու միտում չեն ունեցել: Ընդհակառակը, մեծ երգիծաբանը, թերություններ մատնանշելով հանդերձ, նրբորեն արժևորել է հիշյալ հեղինակներին: Պատկերը կամբողջանա, եթե նկատի առնենք նաև ազգային գրականությունների վերաբերյալ ոչ հեռու անցյալի գաղափարաբանության կաղապարային պարտադրանքները, որոնց հաջորդել են ազատ մտածողության տասնամյակներ:

Ուրեմն՝ ընդգծեք, որ վաղուց էր հասունացել հիշյալ գրողներին ու մանավանդ Ծերենցին աննախապաշար մոտեցումով ըստ արժանվույն գնահատելու անհրաժեշտությունը, ինչն էլ ազնիվ բարեխղճությամբ կատարել է հայցորդը՝ սույն ատենախսությունն ստեղծելով: Ու թեև այն ներառում է գրողի երեք վեպերի գիտական հիմնավոր քննությունը արևմտահայ արձակի և ռոմանտիկական պատմավեպի զարգացման համապատկերում, միաժամանակ արժարժում է նաև հայ նոր գրականության սկզբնավորման ու XIX դ. երկրորդ կեսում մանավանդ ռոմանտիկական պատմավեպի տեսության ու գեղագիտության մի շարք կարևորագույն խնդիրներ: Իսկ սա ենթադրում է ոչ միայն ուսումնասիրվող դարաշրջանի հայ գրական-մշակութային կյանքի լայն ու խոր, համընդգրկուն իմացություն, այլև մեր ազգային գրականության հիմնախնդիրները համաշխարհային գրականության համանման խնդիրների տիրույթում քննելու, համեմատական գրականագիտության ճշգրտված չափանիշներով արժևորելու անհրաժեշտություն, որի իրականացմամբ էլ հայցորդի ծանրակշիռ խոսքը ձեռք է բերել խոր գիտականություն:

Ընդգծենք՝ հետազոտական արդյունավետ աշխատանք է կատարվել՝ ուսումնասիրելով գեղարվեստական և գիտատեսական մեծ ծավալի գրականություն (նաև ռուսերենով ու անգլերենով), պարբերական մամուլ՝ նախանցյալ դարի կեսերից մինչև մեր օրերը, և արխիվային նյութեր (ընդհանուր առմամբ՝ 100 միավոր):

Ատենախոսության հաջողվածության գաղտնիքներից է և այն, որ հեղինակը համառ ու անձանձիր աշխատասիրությամբ գիտական շրջանառության մեջ է ներառել թեմային վերաբերող հսկայական գեղարվեստական ու գիտատեսական նյութ, որը,

բարեբախտաբար, առկա է Երուսաղեմի Գյուլբենկյան մատենադարանում, Երևանի Հարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվային համապատասխան ֆոնդերում: Ի դեպ, Գյուլբենկյան մատենադարանի հարուստ գրական նյութերի ուսումնասիրությամբ է ստեղծվել և մեր «Երվանդ Օտյան» դոկտորական ատենախոսությունը, որը մենագրության տեսքով հրատարակվել է 1996 և 2012 թթ.: Ակնկալում ենք, որ հայցորդը նույնպես, որոշ համալրումներով, կհրատարակի սույն ատենախոսությունը որպես մենագրություն, որով կհարստանա մեր նոր գրականության՝ քննարկվող շրջանի գիտական պատմությունը:

Ատենախոսության գիտական արժանիքները բարեբախտաբար շատ են: Շրջահայաց բանասերը՝ համակարգված մտածողությամբ ու ընդգրկուն հայացքով, փաստորեն ճիշտ և գրեթե ամբողջական է ներկայացրել հարցի պատմությունը հայ նոր գրականության սկզբնավորումից ի վեր: Նա արժանավորապես գնահատել է նախորդներին՝ Ա. Տերտերյան, Հր. Թամրազյան, Էդ. Ջրբաշյան, Ս. Սարինյան, Ա. Շարուրյան, Ռ. Նանումյան, Զ. Ավետիսյան, Ս. Մուրադյան և ուրիշներ, նորովի հիմնավորել է նրանց ընդունելի տեսակետները, հարկ եղած դեպքում պատշաճորեն բանավիճել է նրանց հետ՝ անառարկելի փաստերի քննությամբ կատարելով կատարելով ճշգրտումներ և տալով համոզիչ մեկնություններ:

Հայցելով արգո գիտական հորհրդի և ներկաների ներողմտությունը՝ խոստովանենք, որ ԵՊՀ հայ գրականության մայր ամբիոնում սույն ատենախոսությունը քըննարկելիս մենք ունեցել ենք հանգամանակից բնութագրական ելույթ, ուստի պետք է բնական համարվի մեր այս խոսքում և քիչ առաջ հնչած ամբիոնի կարծիքում որոշ նմանությունների կամ համընկնումների առկայությունը, քանի որ ամբիոնի կարծիքը ձևավորվել է նաև մեր խոսքի հիման վրա:

Ատենախոսությունը՝ որպես ամբողջական գիտական խոսք, կոտ և նպատակահարմար կառուցվածք ունի, որը պայմանավորված է թե՛ նման աշխատանքներին ներկայացվող պահանջներով, թե՛ աշխատանքի բնույթով ու դիտարկվող արդիական հարցադրումների քննարկման հաջորդականությամբ:

Ներածության մեջ հայցորդը հստակորեն հիմնավորել է թեման, նրա արդիականությունն ու գիտական նորույթը, ներկայացրել հարցի պատմությունը, իր առաջադիր

նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը: Գրականագիտական հստակ մտածողության արդյունք է հենց այն իրողությունը, որ ատենախոսության երեք հիմնական գլուխների վերնագրերը քննարկվող հիմնահարցեր են, իսկ նրանցից յուրաքանչյուրի երեք բաժինների վերնագրերը՝ ենթահարցեր, որոնք բարեխղճորեն արծարծված են ատենախոսության էջերում:

Այսպես, առաջին գլխուխը, որ վերնագրված է «**Ռոմանտիզմը արևմտահայ պատմավիպասանության մեջ**», երեք ենթաբաժին ունի՝ «Պատմական թեման ռոմանտիզմի մեթոդաբանության ծիրում», «Պատմական թեման XIX դարի երկրորդ կեսի հայ գրականության մեջ» և «Ռոմանտիզմի դրսևորումները արևմտահայ պատմական արձակում»: **Երկրորդ** գլխի վերնագիրն է «**Ծերենցի պատմավիպասության հայացքները**»: Սա ևս երեք ենթաբաժին ունի՝ «Պատմավեպի արդիականությունը», «Պատմականի և գեղարվեստականի հարաբերակցությունը», «Պատմությունը և փիլիսոփայությունը»: **Երրորդ** գլուխը՝ «**Ծերենցի պատմավիպասանության պոետիկան**», նույնպես երեք ենթաբաժին ունի՝ «Կառուցվածքային առանձնահատկությունները», «Կերպարակերտումը», «Լեզվաոճական առանձնահատկությունները»:

Բոլոր երեք գլուխներում արծարծված հարցադրումների մեկ առ մեկ քննարկումն ու արժևորումը, որով առավել լիարժեք կրացահայտվեր ատենախոսության գիտական բովանդակությունը, որքան ցանկալի, նույնքան էլ անկարելի է մեկ ելույթի շրջանակներում: Ուստի բավարարվելու ենք հայցորդի գիտական օրինակելի աշխատառճի արդյունավետության և Ծերենցի պատմավեպերի՝ նրա գնահատության առավել բնորոշ բանաձևումների դիտարկումով, որով նույնպես, կարծում ենք, կստեղծվի աշխատանքի գիտական որակի մասին ընդհանուր և ամբողջական պատկերացում:

Ուզում ենք շեշտել ատենախոսի գրավոր շարադրանքի մի կարևոր յուրահատկությունը ևս. նրա խոսքը գերծ է ավելորդություններից, փաստարկված է և ունի գիտատեսական հազեցվածություն: Արևմտահայ և արևելահայ գրականությունները նա դիտարկել է որպես սոցիալ-քաղաքական տարեր միջավայրերի ու հասարակական տարբեր պայմանների ծնունդ՝ իրենց առանձնահատկություններով, սակայն ողջամտորեն այդ երկուսը համարում է միևնույն ազգային նպատակադրումներն ունեցող միասնական հայ ժողովրդի ազգային գրականության դրսևորումներ: Քիչ չեն ատենախոսության այն էջերը, որոնցում մատնանշվում են արևմտահայ և արևելահայ գրողների գրական

ազգակցության դրսևորումներ թե՛ գաղափարագեղագիտական նպատակադրումների, թե՛ գրական ուղղությունների ու ժանրերի կիրառման ոլորտներում:

Բնական է՝ հայցորդը Ծերենցի վեպերը դիտարկում է հայ ողբանդանական արձակի և պատմավիպասանության համատեքստում, նորովի հիմնավորում է պրոֆ. Զ. Ավետիսյանի այն պնդումը, թե Բաֆֆուց և Մուրացանից առաջ Ծերենցն է իրականում իր «Թորոս Լևոնի» վեպում գեղարվեստականացնելով 12-րդ դարի Կիլիկիայի հայկական պետականության ռազմաքաղաքական, տնտեսական-մշակութային կյանքն ու մարդկային հարաբերությունները՝ հայ գրականության մեջ սկիզբ դրել պատմավեպի ժանրին: Այս կապակցությամբ տեղին է նրա անբավականությունը Աբովյանի «Վերք Հայաստանի» երկը պատմավեպ համարողներից: Ընկալման հարց է ճիշտ է, որ Աբովյանն ինքն էր իր երկը պատմական վեպ անվանել, ուրեմն՝ ի՞նչ, հեղինակն էր սխալ: Ահա այստեղ է կարևորվում ատենախոսի համոզիչ պարզաբանումը, որ հենված է նախորդների բացատրությունների վրա: Ժամանակին նույնիսկ դասագրքերում գրում էին և սերունդներին սովորեցնում, թե «Վերք Հայաստանին» պատմավեպ է, քանի որ այն պատկերում է պատմական իրադարձություններ, և մատնանշում էին հատկապես 1826-28 թթ. ռուս-պարսկական պատերազմը, ռուսական զորքի, Աղասու և նրա ընկերների սխրանքների շնորհիվ Արևելյան Հայաստանի՝ պարսկական տիրապետությունից ազատագրելն ու ռուսական կայսրության միացումը: Բայց այս դեպքերը կատարվել էին ընդամենը վեպը գրվելուց 13 տարի առաջ, և հեղինակն ականատես էր եղել պատկերված գործողություններին, անգամ անձնապես ծանոթ էր եղել գլխավոր հերոս Աղասուն, որը նրան խաղացրել էր իր ծնկներին: Սակայն գրեթե չի նկատվել այն իրողությունը, որ Աբովյանն իր արդիական վեպում ոչ միայն դժգոհել է ռուս կառավարիչների հակահայ քաղաքականությունից ու Հայկական մարզը Էրիվանսկայա գուբերնյա դարձնելուց ու հայտնի Պոլոժենիայից, վեպը ընծայագրով նվիրել Հայկական մարզի՝ արդեն պաշտանագրկված առաջին կառավարիչ Գևորգ Սմբատյանին: Նա ներառել է հայոց անցյալի պատմության այլ հերոսական դրվագներ ևս՝ մեր հերոս նախնիների սխրանքների օրինակով նոր սերունդներին դաստիարակելու նպատակադրմամբ: Եվ Աբովյանի ոգևորիչ գլխավոր ուժը հենց Հայաստանն էր. հիշենք՝ «Հայաստան հրեշտակի պես առա-

ջիս կանգնած ինձ թև էր տալիս»: Ատենախոսի բնորոշումն ավելի քան համոզիչ է՝ *արդիական վեպ՝ հազեցած անցյալի պատմական դրվագների պատրակային գեղարվեստականացված էջերով*:

Նույն այս առողջ մոտեցմամբ ու ճշգրտումներով են արժևորված արևմտահայ պատմահայրենասիրական ողբերգությունները, Ալիշանի, Պեշիկթաշյանի համարնույթ բանաստեղծությունները, Բաֆֆու, Մուրացանի ու մանավանդ ատենախոսության առանցքը կազմող՝ Ծերենցի պատմավեպերը:

Աշխատանքում հազվադեպ են գուտ տեխնիկական բնույթի մանր վրիպումները, որոնք կշտկվեն այն որպես մենագրություն հրատարակության պատրաստելիս: Այն սեղանի գիրք կդառնա հայ նոր գրականության պատմության ու մանավանդ XIX դ. 70–80-ական թթ. գրական կյանքի ու Ծերենցի ստեղծագործություններով հետաքրքրվող մասնագետների ու լայն շրջանների ընթերցողների համար:

Կարծում ենք՝ այն բոտն քննարկման կարժանանա նաև սաղիմահայության ու մանավանդ հեղինակին եղբայրակից հոգևոր գործիչների շրջանում: Այս աշխատանքը լավագույն պատասխան է այն թերահավատներին, ովքեր, պատմագիտության ու գեղարվեստի սահմանները խառնելով, դեռ կասկածում են՝ սկզբնաղբյուրն է ճիշտ, թե՞ փաստական հիմքով պատմական անցյալը գեղարվեստականացնող, պատմական փորձը արդիականությանը ծառայեցնող գեղագետ գրողը:

Լ. Ալոյանի տենախոսությունը թե՛ իր ծավալով, ձևավորմամբ ու բովանդակային խորությամբ, թե՛ արդիական հարցադրումներով ու դրանց գիտական լուծումներով լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող մանավանդ արդի պահանջներին ու գիտական չափանիշներին: Կառույցը տրամաբանական է՝ երեք գլուխների՝ միմյանց շաղկապված հաջորդականությամբ, նրանցում արժարժված հիմնախնդիրների արդիականությամբ, շարադրանքի բացառիկ գրագիտությամբ ու եզրահանգումների համոզչությամբ: Մեղմագիրը և գիտական հրապարակումներն արտացոլում են աշխատանքի հիմնական բովանդակությունը: Աներկբա այս արժանիքները հուսադրում են, որ գիտության ասպարեզ է մտնում բնական օժտվածությամբ և բարձր պատրաստվածությամբ մի երիտասարդ, որը կարող է հայագիտությունը հարստացնել նոր ձեռքբերումներով, բարձր պահել իր խմբագրած «Սիոն» ամսագրի գիտական հեղինակությունը: Ուզում ենք համոզմունք հայտնել, որ իր

հավատին ու սկզբունքունքներին նվիրյալ այս մակարդակի երիտասարդ հոգևորականի ներկայությունը Քրիստոսի ժամանակներից ի վեր հայ Երուսաղեմի սրբատեղիների պաշտպանության համար ամենօրյա Ավարայրում մարտնչոող զինվորյալ միաբանության մեջ և մասնակցությունը սաղիմահայության հոգեմտավոր ու գիտական կյանքին հույժ անհրաժեշտություն է:

Կարծում ենք՝ Ժ 012 աստիճանաշնորհող խորհուրդը Լևոն Օսիկի Ալոյանին՝ նույն ինքը՝ հոգեշնորհ հայր Ներսես վարդապետին «Պատմության թեման արևմտահայ արձակում» արժեքավոր ատենախոսության համար կշնորհի նրա հայցած՝ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը Ժ. 01. 01. «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ, որի համար լիասիրտ միջնորդում ենք նաև այն հույսով, որ շնորհվող գիտական աստիճանը էլ ավելի կամրապնդի նրա դիրքորոշումները և ավելի վճռական կդարձնի նրան իր ազգանվեր գործունեության մեջ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱՆՈՍ՝

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվ. հայ գրակ. պատմ. և գրակ. տեսության ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, Վ. Գյուրեթի անվ. մրցանակի դափնեկիր

Պրոֆ. Ս. Մուրադյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՄԵՐԻՇԻՎՀԱՆՆԻՍԱՆ

ԵՊՀ գիտքարտուղար, բան. գիտ. թեկնածու

26. 01. 2026

